ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«28» 03 2024թ.
ՊՄ/510-ԳՔ/3276

«ԱՌԱՎՈՏ» ՕՐԱԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂ
Հ. ՋԵԲԵՋՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Ջեբեջյան,

Ի պատասխան Ձեր 14.03.2024թ. հարցման՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը ս.թ. մարտի 5-ին «Եռաբլուր» զինվորական պանթեոնում անցկացված արարողակարգային միջոցառման լուսաբանման համար լրատվամիջոցների հավատարմագրում չի իրականացրել:

Զինվորական պանթեոնում լուսաբանման աշխատանքներ իրականացնելու թույլտվության խնդրանքով էլեկտրոնային փոստի միջոցով ս.թ. մարտի 4-ին՝ աշխատանքային օրվա ավարտին, ՀՀ ՊՆ է դիմել երկու լրատվամիջոց, որոնցից մեկը, նույն խնդրանքով, հեռախոսակապով դիմել է նաև ՊՆ մամուլի քարտուղարին: Լրատվամիջոցին առաջարկվել է աշխատանքները կազմակերպել արարողակարգային միջոցառման ավարտից հետո:

Տեղեկացնում ենք նաև, որ արարողակարգային միջոցառման ավարտից հետո լրատվամիջոցները «Եռաբլուր» զինվորական պանթեոնում իրականացրել են լուսաբանման աշխատանքներ:

3/27/2024

X

ՏԻԳՐԱՆ ՂԱՐԻԲՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: GHARIBYAN TIGRAN 3703820292

/Հ. ԲԱՏԻԿՅԱՆ

Կատարող՝ ՊՆ Տ և ՀԿ վարչություն
Հեռ.՝ 010 29-46-99

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 87, ԷԼ.ՓՈՍՏ՝ hamletbatikyan@mil.am